մղված պայքարը լուսաբանող տվյալները կցկտուր են, անկասկած է, որ աթաբեկության հանձնումը Իվանե Զաքարյանին՝ բոլորովին էլ այնպես խաղաղ ու կամավոր չի կատարվել, ինչպես որ ցանկանում է ներկայացնել Թամար թագուհու առաջին պատմիչը։ Նրա պատմածն ավելի շուտ կասկածել է տալիս, որ Իվանեն ինքն է թագուհուն հարկադրել իրեն հանձնել աթաբեկության պաշտոնը, այդպիսով այն խլելով, թերևս, Իվանե Ախալցիխեցուց։ Իվանե Զաքարյանի և Ախալցիխեցիների միջև պայքարը, ընդ որում դարձյալ ի վնաս վերջիններիս, շարունակվում էր, հավանաբար, նաև հետագայում։ Թվում է, այդ բախումների արդյունքը նկատի ունի Վրաց ժամանակագիրը, երբ պատմում է Քոսե-դաղի (Զմանկատուկի) 1243 թ. նշանավոր ճակատամարտին Իկոնիայի սուլթանի կողմից մասնակցող վրաց իշխանների մասին. «Զորապետներ նշանակեց (Ղիաս ադ-Դին սուլթանը—Հ. Մ.) Շարվաշիս-ձե Ափխազին՝ Դարդին անվամբ... նրա հետ՝ Ախալցիխելի-Թորելի Շալվայի որդի Փարադավլային, որը փախստական գնացել էր սուլթանի մոտ և քաջ ու մարտերում անվանի մարդ էր»[35]։ Երկու տոհմերի միջև թշնամությունը կարող էր հանդարտվել XIII դ. 40-ական թվականների կեսերից, երբ Զաքարյանների գերակշռությունն ակնհայտ էր, և Իվանե Ախալցիխեցու որդի Դավիթը ծառայում էր Ավագ Զաքարյանի մոտ՝ իբրև հեջիբ[36]։

Հայ-վրացական զորքերի միասնությանն ու համերաշխությանը զգալի հարված էր հասցնում նաև դավանական հարցերում Իվանե աթաբեկի դիրքորոշումը։ Գրեթե բոլոր հայկական աղբյուրները Գառնիի պարտությունը բացատրում են իբրև նախախնամության պատիժ՝ ի պատասխան նրա կրոնական անհանդուրժողականության[37]։ «Իվանեի բռնած այս դիրքը հայ եկեղեցու հանդեպ, անշուշտ, մի մեծ սխալ էր, որովհետև նրա կրոնական անհամբերատարությունը դժգոհություն և պառակտում էր առաջացնում հայերի մեջ, որոնք վրացիների հետ միացած պետք է պաշտպանեին Հայաստանն ու Վրաստանը արտաքին ահեղ թշնամիներից»,— դիտում է ակադ. Հ. Մանանդյանը[38]։

---

35 «Վրաց ժամանակագրություն», էջ 77։ Ուշագրավ է, որ «Պատմութիւն վասն ազգին Նետողացի» վկայությամբ, «էր որդին մեծին Շալուէի առ սուլտանն ի վաղուց ժամանակաց» («Պատմութիւն վասն ազգին Նետողաց», էջ 14)։

36 «Վրաց ժամանակագրություն», էջ 80—81,

37 Կիրակոս Գանձակեցի, էջ 224, Վարդան, էջ 143, Միխայել Ասորի, էջ 527։

38 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 198։ Սկզբնաղբյուրների այս զգուշավոր գնահատությանը հակառակ, Շ. Մեսխիան, մեջբերելով և զարգացնելով Վ. Հարությունովայի այն միտքը, թե XII—XIII դդ. «Հայկական ազնվականության ներկայացուցիչները, ընդունելով քաղկեդոնականություն, ոչ միայն դադարում էին հովանավորել ազգային եկեղեցուն, այլև հաճախ խլում էին նրանից տաճարներն ու վանքերը՝ դարձնելով դրանք քաղկեդոնական» (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 3, էջ 90), Իվանե աթաբեկին «հայոց հավատին և եկեղեցուն բացահայտ պայքար» հայտարարող ու քաղկեդոնական ֆանատիկոս է ներկայացնում (Შ. მესხია, საშინაო პოლიტიკური ვითარება და ხამოხელეთ წყობა XII საუკუნის საქართველოში, თბ., 1979, გვ. 257—258)։ Այսպիսով, մոռացության է տրվում այն հանգամանքը, որ Հայաստանում գործող հայ քաղկեդոնականների համար ամենևին էլ խորթ չէր ազգային զգացումը և նրանց՝ հայ մշակույթի հարստացմանն ուղղված գործունեությունը մասամբ ընթանում էր հենց երկրաբնակներին հանձնված վանքերում, ինչը փայլուն երևում է հենց Սիմեոն